ԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ V—VIII ԴԴ.

ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանում ապակու ամենավաղ նմուշները՝ շաղախից պատրաստված ուլունքների և այլ զարդերի ձևով, հանդիպում են մ. թ. ա. II—I հազարամյակների սկզբների դամբարաններում։ Անթափանց ապակուց սրվակներ (ամբողջական և բեկորներով) հայտնի են ուշ ուրարտական բնակավայրերից (Կարմիր բլուր, Օշական)։ Այդ անոթների արտադրության հավանական կենտրոնները համարվում են Առաջավոր Ասիան և միջերկրածովյան ավազանը[1]։

Անտիկ ապակու զդալի քանակությամբ գտածոներ հայտնի են Արտաշատի, Գառնիի, Վաղարշապատի, Աշնակի, Սևանի ավազանի հուշարձանների պեղումներից[2]։ Դրանք աչքի են ընկնում պատրաստման բարձր մակարդակով, գեղարվեստական խոր մտահղացումներով։ Հայաստանի անտիկ ապակու մի մասը ներմուծվել է սիրիական կենտրոններից, ուր այդ շրջանում ապակեգործությունը բուռն զարգացում էր ապրում։ Անտիկ դարաշրջանում Հայաստանում սկզբնավորվում է ապակու տեղական արտադրությունը, որն իր հետագա կնիքն է դնում վաղ միջնադարյան ապակեգործության վրա։

Հայաստանում ապակեգործական արհեստի առկայության վերաբերյալ առաջին հիշատակությանը հանդիպում ենք Ագաթանգեղոսի մոտ[3]։ Ապակեգործության, նրա պատրաստման եղանակի վերաբերյալ տեղեկություններ կան նաև Մատենադարանի XIV—XVI դդ. հայկական ձեռագրերում։ Վերջիններս արտագրված են ավելի հին գրչագիր օրինակներից, որոնցում տրված է եղել ավանդաբար եկող այն փորձը, որը ձեռք են բերել հայ ապակեգործ արհեստավորները դարերի ընթացքում[4]։

Հայաստանում ապակեգործության տարածման վերաբերյալ հետաքրքիր վկայություններ են պահպանվել բյուզանդական աղբյուրներում։ Տրապիզոնի մետրոպոլիտ Լազարոպուլոսը (XIV դ.) Բասենում ապակու արտադրության մասին գրում է. «Կա ինչ որ Փասիանե անունով երկիր..., որն, ինչպես գիտեմ. գտնվում է Պերսարմենիայի շրջանում...։ Այժմ նա, իսմայելացիների կողմից զավթվելուց հետո, օտար անուն ստացավ։ Այստեղ լինում է ապակի...։ Այնպես որ, ով ապակե առարկաների... կարիք է զգում, գնում է այնտեղ գնելու»[5]։ Ապակե գավաթների, ըմպանակների, բաժակների, շշերի

---

1 Р. М. Джанполадян, О трех образцах стекла из Кармир-Блура («Советская археология» (այսուհետև՝ СА), 1964, № 1, с. 307—312).

2 Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան, Հին Հայաստանի ապակին, Երևան, 1969։

3 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, ԺԳ, էջ 150։

4 Կ. Ղաֆադարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940։

5 Հ. Մ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական նոթեր (ՀՍՍՀ ԴԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 7—8, էջ 133)։

և այլ կենցաղային անոթների ու եկեղեցական սպասքների վերաբերյալ բազմաթիվ հիշատակություններ կան միջնադարյան հայ պատմիչների մոտ[6]։

Ապակե անոթների օգտագործման շատ հետաքրքիր փաստ է հաղորդում Թովմա Արծրունին։ Նա հիշատակում է նավթով և ծծմբով ապակե սրվակների մասին, որոնք նետվել են թշնամու վրա. «Այլ հուր և ծծումբ նաւթին բարձեալ ի գործ պատերազմին, եւ զլոյծ բնութիւնս յանօթս ապակեղէնս եդեալ, եւ մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, եւ զհուր առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն»[7]։

IX դ. Հայաստանը Բյուզանդական կայսրությունից կամ նրա ենթակա արևելյան ծայրամասերից ներմուծել է նաև գեղարվեստական ապակի[8]։ Իբն Հաուկալը խոսելով հայ վարպետների պատրաստած արհեստագործական արտադրանքի մասին, գեղարվեստական բարձր մակարդակով արված այլ առարկաների թվում նշում է ապակե ամանեղենը և գունավոր բյուրեղապակին[9]։

Հայաստանի վաղ միջնադարյան ապակին կրում է անտիկ շրջանի ապակեգործության ազդեցությունը և որոշ գծերով մոտենում է նրան։ Հայաստանում հայտնաբերված վաղ միջնադարյան ապակին բաղդատվում է Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի մի շարք վաղ միջնադարյան հնավայրերից հայտնաբերված նյութերի հետ (Ուրբնիսի, Սամթավրո, Մինգեչաուր, Խինիսլի, Սուդիգիլան, Շամախի, Կաբալա, Զեմսկայա և այլն)[10]։

Անդրկովկասում և Հայաստանում հայտնաբերված ապակե իրերը շատ ընդհանուր գծեր ունեն Մերձավոր Արևելքի և Առաջավոր Ասիայի հնավայրերից գտնվածների հետ։ Վերջիններս պահվում են աշխարհի տարբեր թանգարաններում և ուսումնասիրվել են խոշոր գիտնականների կողմից[11]։

---

6 «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 49, 65, 88, «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 158, 285 և այլն։

7 «Պատմութիւն Թովմայի Արծրունւոյ», Կ. Պոլիս, 1852, էջ 147։

8 Դրասխանակերտցի, էջ 198։

9 «Сборник материалов по описанию местностей и племен Кавказа», вып. XXXVIII, Тифлис, 1908, с. 99.

10 ლევან ჭილაშვილი. ნაქალაქარი ურბნისი. თბილისი, 1964, ნინო უგრელიძე ადრეულ შუასავუნეთა ქართლშა მინის წარმოების ისტორიისათვის, თბილისი, 1967, ე. ჩხატარაშვილი. მინის ჭურჭელი შუა საუკუნეთა საქართველოში, თბილისი, 1978; Р. М. Вahидов, Минкэчевир III—VIII эсрлэрдэ, Бакы. 1961; Д. А. Халилов, Раскопки на городище Хыныслы (СА, 1962, № 1); А. Б. Нуриев, Стеклянные изделия и их производство в Кавказской Албании (автореферат кандидатской диссертации, Баку, 1965); его же, О производстве стекла в древней Шамахе («Материальная культура Азербайджана», Баку, 1965); Е. И. Крупнов, Новые источники по древней и средневековой истории Северного Кавказа («Краткие сообщения Института истории материальной культуры», вып. 78, М., 1960); П. С. Уварова, Могильники Северного Кавказа («Материалы по археологии Кавказа», т. VIII); Э. А. Сымонович, Стеклянная посуда из поднепровско-причерноморских памятников черняховской культуры (СА, 1977, № 1) и т. д.

11 C. J. Lamm, Das Glass von Samarra, Berlin, 1928; նույնի, Mittelalterliche Glaser und Steinschnittarbeiten aus dem Nahen-Osten, Berlin, 1929—1930; նույնի, Glas from Iran in the National museum Stokholm, Stokholm-London, 1935; նույնի, Oriental glas of mediaval date found in Sweden and the early history of lustre pa-

Հայաստանի վաղ միջնադարյան ապակին պատրաստվել է մի շարք եղանակներով.

Սառը մշակման եղանակ.— Այս եղանակը ծանոթ է հնուց և կապվում է լեռնային բյուրեղապակու փորագրության հետ։ Նման եղանակով անոթներ պատրաստում էին հատուկ կաղապարներում, այնուհետև ենթարկում հետագա մշակման՝ սառը վիճակում տաշում էին զարդերը։ Այդպիսի զարդերով անոթների առաջին օրինակները Հայաստանում հայտնի են Գառնիի անտիկ դամբարանադաշտի նյութերից։ Դրանց մեջ հետաքրքրական է ձվաձև բլթակներով տանձաձև սրվակը, որը թվագրվում է մ. թ. III դ.։ Տաշված զարդերով ապակու կտորներ կան նաև Գառնիի III—IV դդ. թվագրվող շերտերից[12]։

Վաղ միջնադարյան տաշված զարդերով ապակիներ հայտնի են Գառնիից, Դվինից, Հացավան ամրոցից և Այգևանից։ Հացավան ամրոցում գտնված կլոր բլթակներով, հղկված, կիսագնդաձև թասերի բեկորները, ամենայն հավանականությամբ, բերված են Դվինից։ Դրանք իրենց գույնով և ապակու որակով շատ նման են Դվինի IV—V դդ. շերտերից հայտնաբերված ապակիներին։

Դվինի հավաքածուի փորագիր ապակեղենը բաղկացած է տարբեր ձևերի առարկաներից։ Դրանց մեջ ուրույն տեղ են գրավում կիսագնդաձև թասերը (աղ. I. 1, 2, 4—6)։ Սրանց ապակիները բավական հաստ են, դեղնավուն, կանաչավուն երանգով և ունեն միատեսակ բնորոշ պահպանվածություն՝ պատված են արծաթափայլ շղարշով, որն առաջացել է երկար ժամանակ օդի հետ շփվելուց։ Թասերի պատերին տաշված են կլոր կամ ձվաձև (երբեմն բազմանիստ) փոսիկներ, իսկ հատակին՝ մի մեծ բլթակ՝ անոթին հաստատուն նստվածք տալու համար (չափերն են. բարձրությունը՝ 5—8 սմ, բերանի տրամագիծը՝ 8—11 սմ)։ Նմանօրինակ թասերի բեկորներ հայտնաբերվում են Դվինի միջնաբերդի, կենտրոնական թաղամասի ստորին շերտերից, ինչպես նաև քաղաքային թաղամասերից և թվագրվում են V—VIII դդ.։

Փորագիր թասերի բեկորների մի մասը հայտնաբերվել է 1962 թ. Դվինի Արշակունյաց հարստության և մարզպանական շրջանի դահլիճ-ընդունարանի շերտից, որոնք կնքադրոշմներով և այդ ժամանակի համար բնորոշ նյութերով թվագրվում են V—VII դդ.։ Մեկ այլ խումբ գտնվել է 1964 թ. V—VII դդ. պատկանող «ավազանի» շրջակայքը պեղելու ժամանակ։ Փորագիր զարդերով կիսագնդաձև թասերի բեկորներ են հայտնաբերվել 1966—1967 թթ. Դվինի միջնաբերդի V—VI դդ. շերտերը պեղելիս։ Զգալի քանակությամբ կիսագնդաձև թասերի բեկորներ են հայտնի Դվինի կենտրոնական թաղամասի վերջին տարիների պեղումներից։ Այստեղ V—VI դդ. թվագրվող

---

intig, Stokholm, 1941; Հյուսիս-սիրիական միջնադարյան ապակիների մասին գրել է Ա. Լեյնը (A. Lane, Mediaval finds at Al-Mine, in North-Syria („Archaeologia", LXXXVII, 1938), որտեղ IX դ. փորագիր ապակիներն իրենց արտաքին ձևերով շատ ընդհանրություններ ունեն Դվինի VII—VIII դդ. ապակե փորագիր հաստ պատերով քառանիստ սրվակների հետ։ Վաղ միջնադարյան Սասանյան Իրանի ապակեգործության վերաբերյալ հետաքրքիր դիտողություններ կան՝ R. Ghirshman. Iran, Parthians and Sassanians. London, 1962, աշխատության մեջ։ Պարսկական և Միջագետքի փորագիր ապակիների համառոտ քննությունը կատարված է R. Pinder-Wilson, Cut-Glass vessels from Persia and Mesopotamia the British Museum Quarterly, vol. XXVII, № 1—2, Autumn, 1963.

[12] Б. Н. Аракелян, Гарни, II, Ереван, 1957, с. 64.



Աղյուսակ I

նորահայտ պալատի սյունազարդ դահլիճի հատակին գտնվել են կլոր բլթակներով թասերի բեկորներ, որոնք բաց դեղնավուն հաստ ապակուց են[13] (աղ. I 10, 12, 13)։

Տաշված բլթակներով թասերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ V—VII դդ. շերտերում հայտնաբերված ապակիները բաց դեղնավուն երանգ ունեն։ Այդօրինակ նմուշներ գերազանցապես հայտնաբերվում են Դվինի միջնաբերդից, գահադահլիճի շերտերից, 1966—1967 թթ. բացված մարզպանական շինությունների համալիրից, Հացավան ամրոցի IV—V դդ. շերտերից[14]։ Այս ապակիների բլթակները խորն են և տեխնիկական կատարման առումով բավական մոտ Իրանի ու Միջագետքի նույնանման ապակիների զարդերին։ VIII—IX դդ. ապակիները կանաչավուն են, ուժեղ իրիզացիայի ենթարկված, իսկ բլթակները՝ պակաս խորությամբ։ VIII—IX դդ. փորագիր ապակիների լավ թվագրված օրինակներ հայտնի են Դվինի կենտրոնական թաղամասի պեղումների նյութերից։

Դվինի և Հացավանի տաշված բլթակներով թասերի թվագրությունը հաստատվում է Ուրբնիսիի, Ռուսթավիի, Սամթավրոյի, Մինգեչաուրի, Սուդիգիլանի և այլ հուշարձանների պեղումներից հայտնաբերված նույնանման նյութերով։ Անդրկովկասյան հուշարձաններում հայտնաբերված տաշված օղակներով կիսագնդաձև թասերի համեմատական ուսումնասիրությունը դրանց մի մասի մոտ երևան է բերում որակի և գույնի ընդհանուր գծեր՝ տարբերվելով սիրիական և իրանական ապակիներից։ Այս հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ դրանց տեղական՝ անդրկովկասյան արտադրական կենտրոններին պատկանելու ենթադրության համար։

Տաշված բլթակներով կիսագնդաձև թասերի մեջ առանձին խումբ են կազմում հաստ, կիսաթափանցիկ, դեղնավուն ապակուց պատրաստված օրինակները, որոնք աչքի են ընկնում պատրաստման անթերիությամբ, ապակու բարձր որակով և խորը բլթակներով (աղ. I 7, II_2)։ Այդ ապակիների մեծ մասը դուրս է գալիս Դվինի միջնաբերդում բացված գահադահլիճից և նրա շրջակա շերտերից, որոնք թվագրվում են V—VII դդ.։ Հացավան ամրոցից հայտնաբերված բեկորների մի մեծ խումբ իր ձևով մոտ է Դվինի հիշյալ անոթներին։ Նման թասերի արտադրության կենտրոնները V—VII դդ. գտնվում էին նաև Մերձավոր Արևելքում (Իրան, Միջագետք)։ Կիսագնդաձև թասեր հայտնի են, օրինակ, Իրանի Քիշ քաղաքի վերին շերտի Վահրամ Գուրի պալատի ավերակներից (V դ. առաջին կես), Գիլանից և այլ հնավայրերից[15]։

Հետաքրքրական է 1964 թ. Դվինի միջնաբերդի V—VI դդ. շինությունների շերտից հայտնաբերված թասը (պահպանվել է կիսով չափ. բարձրությունը՝ 9 սմ, բերանի տրամագիծը՝ 10 սմ)[16]։ Այն կիսաթափանցիկ հաստ

---

13 Ա. Ա. Քալանթարյան, Դվին I, կենտրոնական թաղամասի պեղումները 1964—1970 թթ., Երևան, 1976, էջ 89—91։

14 Գ. Ա. Տիրացյան, Հացավան ամրոցի 1963 և 1965 թթ. պեղումների նյութերից («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 287)։

15 D. B. Harden, Glass from Kish, „Iraq", vol. I, part. 2, 1934, pp. 131—132, fig. 6—9; R. Ghirshman, նշվ. աշխ., էջ 239, նկ. 292։

16 Հ. Մ. Ջանփոլադյան, Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ., Երևան, 1974, էջ 57։

ապակուց է (4 մմ) և ունի փոքր օղակաձև նստուկ։ Անոթի պատերն արտաքուստ զարդարված են երկշարք, խորը փորագիր զարդերով՝ 7 հատ վերին մասում և 6՝ ստորին (աղ. II_1)։ Համակենտրոն զարդերի միջև եղած բաց տարածությունը լցված է խորը տաշված բլթակներով։ Այս անոթը սառը մշակման եղանակով պատրաստված ապակու բացառիկ նմուշներից է և պատմա-հնագիտական մեծ արժեք է ներկայացնում։ Դվինում նման զարդերով ապակիները շատ հազվագյուտ են։ Դրանք հայտնի են կենտրոնական թաղամասի V—VI դդ. շերտերից[17], ինչպես նաև մի բեկոր՝ Հացավանի պեղումներից[18]։ 1975 թ. համակենտրոն զարդերով թասի մի բեկոր գտնվեց Դվին քաղաքի տարածքից (աղ. I_3)։ Անդրկովկասի վաղ միջնադարյան հուշարձաններում այդ ապակիները գրեթե բացակայում են։

Համակենտրոն փորագիր զարդի մոտիվը սկզբնավորվում է անտիկ ժամանակաշրջանում և հանդիպում է հռենոսյան մարզում՝ Սարգիսում, Դուրա Եվրոպոսում[19] և այլուր։ Սակայն այն լայն տարածում է գտնում V—VIII դդ. Մերձավոր Արևելքի ապակեգործական կենտրոններում։ Նման զարդերով թասեր հայտնի են Շոշում[20], Քիշում[21] և մերձավորարևելյան այլ կենտրոններում։ Հայաստանում հայտնաբերված համակենտրոն փորագիր զարդերով կիսագնդաձև թասերը, անշուշտ, ներմուծված են վերոհիշյալ վայրերից։

Սառը մշակման եղանակով պատրաստված անոթների մյուս խումբը երկարավուն սրվակներ են, որոնք Հայաստանում հայտնի են միայն Դվինի պեղումներից։ Դրանք կանաչավուն հաստ ապակուց են (3—4 մմ) և կրում են ձվաձև տաշված զարդեր (աղ. I_{14})։ Ելնելով ապակու արտաքին հատկանիշներից, կարելի է ասել, որ դրանք տեղական արտադրանք են և որոշ չափով նմանվում են VIII—IX դդ. կիսագնդաձև թասերի ապակու որակին։ Սրվակներ (բեկորներով) հայտնաբերվել են Դվինի կենտրոնական թաղամասից (VIII դ. շերտում)։ 1938 թ. պեղումների ժամանակ սրվակներից մեկը գտնվել է Եզիդ ոստիկանի Դաբիլում (Դվին) հատած VIII դ. դրամի հետ։ Նույնանման անոթի բեկոր հայտնի է Մինգեչաուրից, որը թվագրվում է IV—VIII դդ.[22]։ Հավանաբար, ձվաձև, փորագիր զարդերով. երկարավուն սրվակների արտադրության կենտրոններ եղել են նաև Միջագետքում։ Նման մի սրվակի մասին գրել է Ռ. Պինդեր-Վիլսոնը, որն այն թվագրում է V—VI դդ.[23]։

Կաղապարի մեջ փչելու եղանակ.— Այս եղանակով են պատրաստվել հաստ ապակուց, քառակող իրանով փոքր սրվակները (աղ. I_9, $II_{3, 8}$), որոնք օգտագործվել են օծանելիքի համար։ Դրանց պատրաստման տեխնիկան քիչ է տարբերվում վերոհիշյալ թասերի պատրաստման տեխնիկայից։

---

17 Ա. Ա. Քալանթարյան, նշվ. աշխ., էջ 92։

18 Գ. Ա. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 290։

19 Նույն տեղում, առղատակ 15։

20 M. Dieulafoy, L'acropol de Suse, t. III, Paris, 1893, pp. 420, 421, 432, fig. 290; C. J. Lamm, Les verres trouvés a Suse, „Syria", 1931, vol. XII, pl. LXXX; նույնի, Mittelalterliche Glaser, taf. 52 $_{12}$.

21 D. B. Harden, նշվ. աշխ., նկ. $4_{10, 11}$, $5_{11, 13}$

22 Р. М. Вахидов, նշվ. աշխ., աղ. XI 20.

23 R. Pinder-Wilson, նշվ. աշխ., նկ. 15 a, b։

Աղյուսակ II.

եթե նախորդ անոթները պատրաստվում էին հասարակ կաղապարի մեջ և հանելուց հետո սառը վիճակում զարդարվում փորագրությամբ, ապա այստեղ արդեն ապակին ուղղակի փչվում է զարդեր ունեցող կաղապարի մեջ, որի հետևանքով սրվակների վրա առաջանում էին հորիզոնական և ուղղահայաց փորագիր զարդեր։ Կաղապարից հանելուց հետո միայն դրանք մշակվում են և հղկվում։ Այս սրվակների վզի մասը մի փոքր լայնանում է և դրանք ունեն չորս փոքրիկ հենակ-ոտք։ Հիշյալ սրվակները լայնորեն տարածված են Առաջավոր Ասիայում և Եգիպտոսում[24]։ Վ. Հոնեյի կարծիքով, դրանք եգիպտական ծագում ունեն[25], Լամը համարում է կոպտական, մարդակերպ ոսկրե ամուլետների ընդօրինակություն և թվագրում է VII—VIII դդ.[26]։ Վերջին տարիների պեղումները Եգիպտոսում՝ վաղ միջնադարյան շերտերից, երևան բերեցին նման սրվակների մի քանի օրինակներ (VII—IX դդ.)[27]։ Այս ամենը խոսում է այն մասին, որ սրվակների այս տիպը, ամենայն հավանականությամբ, եգիպտական ծագում ունի։ Հավանաբար, դրանց արտադրությունը կազմակերպվել է ամենուրեք, այդ թվում նաև Միջագետքում, Հայաստանում, Անդրկովկասում, Միջին Ասիայում։

Առանձին խումբ են կազմում ռելիեֆ զարդերով հաստ ապակուց անոթները, որոնք նույնպես փչվել են զարդարուն կաղապարների մեջ։ Հայաստանի վաղ միջնադարյան հուշարձաններում այդպիսի անոթներ գրեթե չեն հանդիպում։ Բացառություն է Դվինի միջնաբերդից հայտնաբերված սրվակը, որն իր տեսակի մեջ եզակի է։ Սրվակն ունի տանձաձև, քիչ երկարավուն իրան, կլոր, հարթ կտրած հատակ և բավական նեղ վիզ (աղ. 1 8)։ Շուրթը կոտրված է. մերձավորարևելյան նման անոթների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ այն ունեցել է երկար վիզ։ Ապակին հաստ է, քիչ կանաչավուն և պատված է սպիտակ շերտով։ Ապակին արտաքնապես մոտ է կլոր բլթակներով թասերի ապակիների որակին։ Սրվակը կրում է եռանկյունաձև ռելիեֆ զարդեր։ Այդպիսի զարդերով ապակե անոթներ չեն հանդիպում նաև մերձավորարևելյան հավաքածուներում, սակայն ռելիեֆ և այլ տիպի զարդերով անոթներ հայտնի են վաղ միջնադարյան սիրիական կենտրոններից (Հալեպ) և Պաղեստինից։ Ձևով այս սրվակին շատ մոտ, հատակի և շուրթի նույնանման մշակմամբ սրվակներ հրատարակել է Լամը և թվագրել IV—VI դդ.[28]։

Դվինից հայտնի են նաև նույն տեխնիկայով պատրաստված երկու այլ անոթներ, որոնց թվագրությունը, սակայն, խիստ թեական է։ Առաջինը փոքրիկ սրվակ է (աղ. I 11), հաստ, անգույն ապակուց, կլոր հատակով։ Պատերը հարդարված են ուռուցիկ չորս օվալներով։ Մյուսը մանուշակագույն

---

[24] W. B. Honey, Glass, London, 1945, p. 41, pl. 13c; C. J. Lamm, Das Glass von Samarra, № 217—219.

[25] W. B. Honey, նշվ. աշխ., էջ 41,

[26] C. J. Lamm, նշվ. աշխ., էջ 60· Oskar Wulff, Altchristliche und Mittelalterliche Byzantinische und Italienische Bildwerke, Berlin, 1911, taf. XXII.

[27] J. Legland, Fouille et travaux en Egypte et Soudan, 1962—1963, „Orientalia", vol. 33, fasc. 2—3, p. 342, pl. XXVI, fig. 6.

[28] C. J. Lamm, Mittelalterliche Glaser, S. 73, taf. 20₈, ₂₂, ₂₃.

ապակուց թասի շրթնամաս է՝ խաղողի ուռուցիկ զարդով։ Վերջինս Բ. Շելկովնիկովը կապում է Զվարթնոցի քանդակների հետ[29]։

Ազատ փչման եղանակ.— Վաղ միջնադարյան ապակու հավաքածուներում առանձին խումբ են կազմում այս եղանակով պատրաստված անոթները։ Այդ տեխնիկան, որը լայն կիրառում ուներ անտիկ շրջանում, ավելի կատարելագործվում է վաղ միջնադարում։ Ազատ փչման եղանակով պատրաստված ապակե անոթները, ըստ իրենց արտաքին ձևերի, բաժանվում են հետևյալ խմբերի։

ա) Փոքր սրվակներ.— Սրանք համեմատաբար հաստ (3—5 մմ), կանաչավուն, դեղին երանգով անոթներ են։ Ամբողջական է միայն մեկը, որն ունի տանձաձև իրան, տափակ հատակ, համեմատաբար լայն վիզ և փռված պսակ (բարձրությունը՝ 7 սմ)։ Սրվակը խիստ բյուրեղացած է և իր վրա ունի մանր ճեղքվածքներ, որոնք ցանցի տպավորություն են թողնում (աղ. III 2)։ Հաջորդ երեք սրվակները (բերանները կոտրված են) պատրաստված են ոչ բարձրորակ ապակուց։ Դրանցից մեկը ձվաձև է, կլոր հատակով, ամենայն հավանականությամբ, ունեցել է նեղ վիզ և փոքրիկ բերան (աղ. III 2)։ Մյուս սրվակն ունի տափակ կտրված հատակ և ուղիղ իջնող պատեր, վզի մասում պատերը թեքվում են։ Սրվակների հետ միասին հայտնաբերվել են ուշ սասանյան կնքադրոշմներ, ինչպես նաև՝ V—VI դդ. թվագրվող Անդրեաս առաքյալի ռելիեֆ պատկերով մի կավե սրվակ։ Այս ձվաձև սրվակը գտնվել է քաղաքի կենտրոնական թաղամասից՝ V—VII դդ. շինությունների շերտից։

բ) Ձվաձև սրվակներ.— Հայաստանի և Անդրկովկասի այլ վաղ միջնադարյան հուշարձաններից հայտնի են հիմնականում մուգ կապտականաչավուն, խուլ ապակուց, բավական հաստ, տանձաձև իրանով սրվակներ, որոնց վերին մասը քիչ երկարում է և միանում տափակ, հաստ պսակին։ Այդ սրվակները (բարձրությունը՝ 10—12 սմ) իրենց ձևով որոշ նմանություն ունեն ավելի ուշ շրջանի կավե սնդկամաններին։ Դվինում դրանցից ամբողջական պահպանվել է մեկ հատ (աղ. III 1), մեծ քանակությամբ բեկորներ (վզի մասով) գտնվել են կենտրոնական թաղամասի V—VI դդ. շերտերից (աղ. III 7), ինչպես նաև միջնաբերդում՝ պալատական սրահի շրջակայքից։ Ինչպես վերը նշեցինք, մեր պատմիչների մոտ վկայություն է պահպանվել այն մասին, որ ապակե հատուկ սրվակների մեջ նավթ էին լցնում և քարանետ մեքենայով նետում թշնամու վրա։ Մեզ թվում է, որ հիշյալ սրվակները կարող էին օգտագործվել այդ նպատակով, քանի որ դրանց ձևը և ապակու հաստությունը խիստ մատչելի է նման ձեռնարկման համար։ Դվինի միջնաբերդից գտնված նմանօրինակ սրվակի բեկորներից մեկը հրդեհի մեջ ընկնելու հետևանքով օքսիդացել է (աղ. III 6)։ Կենտրոնական թաղամասում այդպիսի սրվակ հայտնաբերվել է հրդեհի հետևանքով ոչնչացված V—VI դդ. սյունազարդ դահլիճից։ Իհարկե, չի բացառվում, որ այս սրվակներն օգտագործվեին նաև այլ նպատակների համար, ինչպիսին կարող էր լինել օծանելիքի պահպանումը և տեղափոխումը։ Իր ձևով և չափով նույնանման մի սրվակ գտնվել է Ուրբնիսիի VI—VIII դդ. շերտում (պահպանվում է Վրաստանի պետական պատմական թանգարանում, № 1—62—4038)։

գ) Բաժակներ.— Վաղ միջնադարյան շերտերում դրանք հազվադեպ են

29 Б. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина (Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. IV, Երևան, 1952, էջ 18—19)։



Աղյուսակ III

հանդիպում։ Դվինից հայտնի է մի օրինակ, որն անթափանց ապակուց է, ուղիղ իջնող պատերով, լայն բերանով և հարթ հատակով։ Բաժակը գտնվել է կենտրոնական թաղամասի կաթողիկոսարանի շերտից՝ փոքրադիր կճուճների և խաղողի որթատունկի զարդով կարասի բեկորի հետ և թվագրվում է VII—VIII դդ.։

Դվինից հայտնի է նաև բաց կանաչավուն մեկ այլ բաժակ (գտնվել է պատահաբար), որի պատերը ստորին մասում նկատելիորեն նեղանալով իջնում են դեպի հատակը (չափերն են. բարձրությունը՝ 8,5 սմ, բերանի տրամագիծը՝ 7 սմ, հատակի տրամագիծը՝ 3 սմ)։ Բաժակի իրանի վերին մասում, ծորման միջոցով, արված են կապույտ գույնի 3—4 կետեր (աղ. II 4)։ Նույնանման բաժակի մի բեկոր հայտնի է Գառնիից։ Ապակիների այս տիպը թվագրվում է IV—V դդ.։ Նման անոթների բազմաթիվ բեկորներ հայտնի են Տմուտարականի պեղումներից[30], որոնք թվագրվում են նշված ժամանակաշրջանով։ Ամբողջական օրինակներ գտնվել են Հարավային Ռուսաստանի վաղ միջնադարյան դամբարաններից։ Այս եղանակով պատրաստված բաժակների արտադրությունը III—V դդ. լայնորեն տարածված է եղել Մերձավոր Արևելքում[31]։ Բաժակների մի մասը, որոնք համեմատաբար ավելի հաստ ապակուց են, նույնպես զուգահեռ նյութերի միջոցով թվագրվում են վաղ միջնադարյան ժամանակաշրջանով[32]։ Դրանք իրենց վրա կրում են փորագրման եղանակով արված մեկ կամ երկու շրջանաձև ակոսներ, որոնք անցնում են բերանի տակով և իրանի կենտրոնով։ Դվինում այդպիսի մի բեկոր գտնվել է VIII դ. շերտից, Գառնիում այդ ապակիները հայտնի են ստորին շերտերից և թվագրվում են IV—V դդ.։

գ) Թասեր.— Պատրաստված են գերազանցապես բարակ ապակուց։ Դրանք երկու տիպի են՝ լայն, փռված բերանով, նախշերից զուրկ և ալիքաձև զարդերով։ Հանդիպում են միայն Դվինի հավաքածուներում։

Առաջին տիպն աչքի է ընկնում իր մեծ չափերով (բարձրությունը՝ 3,7—5,5 սմ, բերանի տրամագիծը՝ 10,5—26 սմ, հատակի տրամագիծը՝ 7,5—20 սմ)։ Դրանք ծանծաղ են, պատերը կորությամբ իջնում և միանում են հարթ հատակին, պսակներ չունեն։ Ապակին բաց կանաչավուն է։ Թասերի այս խումբը մեծ մասամբ գտնվել է կենտրոնական թաղամասի V—VII դդ. կառույցների շերտից, միջնաբերդից, հնոցների շրջանից և թվագրվում է VI—VIII դդ.։

Թասերի մյուս խումբը կանաչավուն ապակուց, բարակ պատերով անոթներ են՝ ալիքաձև շեղ կանելյուրներով, որոնք սկսվում են հարթ հատակի կենտրոնից և վերջանում ծալված պսակով։ Ապակե թասերը կանելյուրներով զարդարելը տարածված էր Իրանում՝ սկսած VI դ.[33]։ Հավանաբար, այդ տեխնիկան վաղ միջնադարում գոյություն է ունեցել նաև Հայաստանում, որը լայն տարածում է ստացել հատկապես IX դ.։ Այդպիսի թասեր (ամբող-

[30] А. П. Сорокина, Позднеантичное и раннесредневековое стекло с Таманского городища (в сб. «Керамика и стекло древней Тмутаракани», М., 1963, с. 135—136, рис. 2₁,₂).

[31] „Trois millenairer d' art verrier a travers les colections publiques et prive'es de Belgique", Lie'ge, 1958, p. 53, fig. 65.

[32] А. П. Сорокина, *նշվ. աշխ., էջ 190, նկ. 1, 8։*

[33] C. J. Lamm, Glass from Iran in the National museum Stokholm, Abb. 18.

ական և բեկորներով) գտնվել են Դվինի միջնաբերդի մարզպանական գահ-լիճ-ընդունարանի վերին շերտից և թվագրվում են VII—VIII դդ.։ Նմանօրինակ թասեր գտնվել են նաև կենտրոնական թաղամասից։ Թասերից մի քանիսը հատակի շուրջն ունեն ունելիի օգնությամբ, սեղմելով կատարված զարդեր։

Բ. Շելկովնիկովի կարծիքով, Դվինի բազիլիկ եկեղեցու և կաթողիկոսական պալատի շրջանում հայտնաբերված հաստ, փորագիր, բարձրորակ ապակու առկայությունը խոսում է այն մասին, որ դրանք ներմուծված են Միջագետքից (Սամառա)[34]։ Զարգացնելով իր այս թեզը, նա նշում է, որ կենտրոնական թաղամասում չի հայտնաբերվել բարակ ապակու և ոչ մի բեկոր. հետևաբար IX—X դդ. Դվինում տեղական ապակու արտադրություն չի եղել։ Մինչդեռ միջնաբերդի X—XIII դդ. շերտերում բարակ պատերով ապակե անոթների առկայությունն արդեն խոսում է տեղական արտադրության մասին[35]։

Մոզաիկ ապակի.— Ապակու մշակման այս տեխնիկան գալիս է շատ հնուց։ Նրա հայրենիքը համարվում է Եգիպտոսը, որտեղ նոր թագավորության շրջանից արդեն հայտնի են մոզաիկ ապակե սալիկներ։ Մոզաիկ ապակուց անոթների պատրաստումը, հավանաբար, սկսվել է մ. թ. ա. III դ.։ Դրանց մեծ մասը Ալեքսանդրիայի արհեստանոցներից է դուրս եկել։ Հետագայում այդ տեխնիկան անցել է Հռոմ։ Մ. թ. ա. II— մ. թ. II—III դդ. արտադրված հիանալի մոզաիկ ապակե թասերը հիմնականում արևմտյան հռոմեական ծագում ունեն[36], ստացել են հազարածաղիկ (millefiori) անունը և անտիկ շրջանում շատ թանկ են գնահատվել։

Մոզաիկ ապակե անոթների պատրաստման տեխնիկան ավանդաբար անցել է վաղ միջնադարին և շարունակվել ընդհուպ IX—X դդ.։ Համենայն դեպս, Արաբական խալիֆաթի մայրաքաղաք Սամառայի պեղումների ժամանակ գտնվել են մի քանի բեկորներ, որոնք պատկանում են VIII—IX դդ[37]։ Նման ապակու վաղ միջնադարյան Արևելքի հնավայրերից գտնվելը խոսում է այն մասին, որ գոյություն են ունեցել արևելյան կենտրոններ, որտեղ մինչև IX դ. արտադրվել են մոզաիկ ապակիներ[38]։ Այս ենթադրությունը հաստատվում է Դվինից հայտնաբերված մոզաիկ ապակե թասերով։

Դվինի միջնաբերդից գտնված առաջին թասը[39] (չափերն են. բարձրությունը՝ 3,2 սմ, բերանի տրամագիծը՝ 14 սմ, հատակի տրամագիծը՝ 4,5 սմ), ինչպես և նույնանման բոլոր թասերը, պատրաստված են կաղապարային հնման եղանակով։ Այն ոչ խորը, առանց պսակի և ոտքի, ուղիղ կտրված հատակով անոթ է։ Ներսից և դրսից, մուգ շագանակագույն (սևի խփող) ֆոնի վրա արված են սպիտակ և շագանակագույն երանգներով բազմաթիվ

---

34 Б. А. Шелковников. Русское стекло домонгольского времени (СА, 1965, № 1, с. 216).

35 Նույն տեղում։

36 R. W. Smith, Glase from ancient world, New-Jork, 1957, p. 47. Մոզաիկ ապակիների վերաբերյալ մանրամասն տե՛ս Н. Каталин, Стекло М., 1959.

37 C. J. Lamm. Das Glass von Samarra, S. 108 և հաջորդը։

38 R. W. Smith, նշվ. աշխ., էջ 243—244, նկ. 484։

39 Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, էջ 26, Հ. Մ. Ջանփոլադյան, նշվ. աշխ., էջ 24, № 10։

օղակներ։ Թասի ներսում, օղակների միջև, կան կետեր և գծիկներ, իսկ կենտրոնական մասում՝ կարմիր երիզներով եռակողմ զարդեր (վեց հատ, աղ. II₅)։

Երկրորդ թասը (շրթնամասով բեկոր է) գտնվել է IX դ. նյութերի հետ միասին։ Զարդաձևերով այն տարբերվում է նախորդից։ Սրա դարշնագույն միասնական ֆոնի վրա կան խառը դասավորությամբ սպիտակ գծիկներ, որոնք անոթին շքեղ տեսք են տալիս (աղ. II₆)։ Իր ձևով թասը մոտենում է նախորդին և, հավանաբար, միևնույն կենտրոնի արտադրանք է։

Ռ. Սմիթի հավաքածուում ներկայացված վաղ միջնադարյան մոզաիկ թասերից մեկն իր ձևով և գույնով ընդհանրություններ ունի Դվինից հայտնաբերված առաջին թասի հետ։ Նա այն թվագրում է մի ամբողջ դարաշրջանով (IV—IX դդ.), համեմատելով Սամառայի նույնանման ապակիների հետ[40]։ Դվինի թասերը, ամենայն հավանականությամբ, սերում են փոքրասիական կամ արևելյան ապակեգործական որևէ կենտրոնից, ավելի վաղ շրջանի արտադրանք են, սակայն դրանց ժամանակագրական սահմանները որոշելը խիստ դժվար է։

Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում մոզաիկ ապակիների պատրաստման բարդ տեխնիկան միջնադարում կիրառվում էր միայն ուլունքների և այլ զարդերի արտադրության մեջ։ Վրաստանում, Սամթավրոյի վաղ միջնադարյան դամբարանադաշտի հնագիտական նյութերում հաճախ են հանդիպում այդ տեխնիկայով պատրաստված ապարանջաններ, մատանիներ և ուլունքներ[41]։ Մոզաիկ ապակուց ուլունքներ շատ են գտնվել Մինգեչաուրից[42]։ Դվինից հայտնաբերվածները հիմնականում տակառաձև են և դեղին, կապույտ, դարշնագույն շերտերով։

Դվինից և Գառնիից հայտնի են նույն տեխնիկայով պատրաստված կոնաձև, կիսագնդաձև և կոճակաձև փոքր առարկաներ՝ տարբեր երանգներով, որոնք մոտ են հռոմեական ծագում ունեցող մոզաիկ թասերի գույներին[43]։ Այս իրերի կիրառության հարցը որոշելը դժվար է։ Ռ. Սմիթը նշում է, որ մոզաիկ ապակու զանգվածներից երբեմն պատրաստում էին առանձին կտորներ, որոնցով զարդարում էին կահույքը, ակնեղենի տուփերը և այլն[44]։ Չի բացառվում, որ կոնաձև այդ առարկաները եղած լինեն խաղափուլեր։ Դվինից գտնվածների թիվը հասնում է մոտ երկու տասնյակի, որոնց մեջ կան նաև կավից և կարմիր տուֆից պատրաստվածներ։ Նույնանման առարկաներ հայտնի են Հյուսիսային Եվրոպայից[45]։ Ռուսաստանում դրանք օգտագործվել են ավելի ուշ (X—XI դդ.), պայմանական «շաշկի» կոչվող խաղում[46]։

V—VIII դդ. Հայաստանում արտադրվել է նաև այլ տիպի ապակեղեն։ 1973—1974 թթ. Դվինի կենտրոնական թաղամասում բացված VII դ. սկզբ-

---

[40] R. W. Smith, նշվ. աշխ., նկ. 484։

[41] Ն. Ղաղաշվիլի, նշվ. աշխ., նկ. 28, աղ. 1։

[42] Բ. Մ. Բահանով, նշվ. աշխ., աղ. XV։

[43] Ա. Ա. Քալանթարյան, նշվ. աշխ., աղ. XXXIV, 2—5, Հ. Մ. Ջանփոլադյան, նշվ. աշխ., էջ 70, № 131։

[44] R. W. Smith, նշվ. աշխ., էջ 47։

[45] H. Arbman, Birka, I, Uppsala, 1940—1943, Taf. 147—149.

[46] Г. Ф. Корзухина, Из истории игр на Руси (СА, 1963, № 4, с. 85—102).

ների ապակեգործական արհեստանոցը հիմնականում մասնագիտացված էր ղամպաբների, լուսամուտի ապակիների և թերևս խճանկարի հատիկների արտադրության ուղղությամբ, չնայած արհեստանոցի շրջապատից գտնվել են նաև բաժակների, սրվակների, կանթերի խոռանված կաորներ։ V դ. պալատի շրջապատից հայտնաբերվում են կլոր հենակով, բարձր ոտքով, կանաչավուն ապակուց գավաթների բազմաթիվ բեկորներ (աղ. III 3)։ Կան ալամբիկների երկարավուն քթիկներ (աղ. III 4)։

Դվինի ապակիների մեջ հայտնվում են նաև բոլորովին այլ նշանակությամբ նյութեր։ Դրանք, այսպես կոչված, էքզագիաներն են (էտալոններ, ոսկե գրամներ կշռելու համար)։ Էտալոնները սկավառակաձև են, կապույտ, մաքուր ապակուց, որոնց վրա, դեռևս սաք վիճակում, կնիքով դրոշմվել է խաչանման պատկեր, որի ծայրերն ավարտվում են տարբեր սիմվոլներով կամ հունարեն սառերով։ V—VI դդ. այս էտալոնները տարածված էին բյուզանդական աշխարհում։ Նման նշաններով մեդալիոններ քանդակված են Զվարթնոցի տաճարի կոդովաձև խոյակների վրա. Ներսես կաթողիկոսի անվան և կոչման հունարեն սկզբնատառերով։ Ենթադրել, որ դա Ներսես Տայեցու կնիքի վերարտադրությունն է, առայժմ փաստերը թույլ չեն տալիս։

Հայաստանի միջնադարյան ապակեգործությունն իր բուռն վերելքն է ապրում IX դ.՝ հենվելով վաղ միջնադարյան ապակեգործության լավագույն ավանդույթների վրա։

СТЕКЛОДЕЛИЕ В АРМЕНИИ В V—VIII вв.

АРАМ КАЛАНТАРЯН

Резюме

Раннесредневековое стекло Армении по технике изготовления и отделки близко к образцам стеклоделия античной эпохи. На стеклоделии чувствуется влияние центров Ближнего и Среднего Востока. Прямые аналогии по армянском стеклу V—VIII вв. известны также в изделиях Грузии и Кавказской Албании.

В результате раскопок в памятниках Армении выявлено несколько групп стекла: шлифованное стекло, гравированное стекло, сосуды, изготовленные способами свободного дутья, дутья в форму и мозаичное стекло. В Двине, во время раскопок мастерской VII в., был обнаружен производственный брак лампад, найдены также обломки оконного стекла. Интересны стеклянные экзатии с оттисками печатей.